ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/18

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.06.2017թ. թիվ 03/73-1/10692-17 գրությամբ «Դարֆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.06.2017թ. թիվ ԴՎԱ/1719 գրության հիման վրա, 13.06.2017թ. թիվ 03/73-1/10692-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Դարֆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Դարֆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Ի պատասխան ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 14.06.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/10777-17 գրության՝ «Դարֆ» ՍՊԸ-ն 22.06.2017թ. գրությամբ հայտնել է, որ մասնակցելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին՝ առաջնորդվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և կատարել է Ընթացակարգով նախատեսված պահանջները:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը, որի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

«ԴԱՐՖ» ՍՊԸ-ն հայտնել է, որ երկար տարիներ հանդիսանալով ՀՀ պաշտպանության նախարարության ավտոպահեստամասերի խոշորագույն մատակարարներից մեկը, և հայկական ավտոպահեստամասերի շուկայում առաջատար ընկերություններից մեկը, մասնակցելով «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով ընթացակարգին և Պատվիրատուին առաջարկելով իր կողմից վաճառվող ապրանքային ցանկից լավագույն տեսականին՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի թիվ 5, 11, 12, 15, 21, 23, 25, 27, 28, 30, 33, 34, 38, 40, 41, 42, 47, 58 և 61-րդ չափաբաժինների մասով մերժվել է՝ անվադողերի տեխնիկական բնութագրերի ոչ էական և չնչին շեղումների պատճառով, որոնք ընդհանրապես ոչ մի առնչություն չունեն առաջարկվող անվադողերի որակի հետ:

Նախորդ տարիներին կազմակերպված ավտոպահեստամասերի մրցույթների ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում հաշվառված նույն մեքենաների համար Ընկերության կողմից մատակարարվել են նույն չափսի և նույն

տեխնիկական բնութագրով անվադողեր, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության ամենախոշոր և հայտնի ընկերություններից մեկի ООО Торговый Дом КАМА և աշխարհահռչակ գերմանական Continental անվադողեր արտադրող գործարանի դուստր ձեռնարկության Continental Tires RUS Ltd գործարանի արտադրության անվադողերը:

Այս տարվա համար Պատվիրատուին առաջարկվել են նույն տեխնիկայի համար նախատեսված նույն անվադողերը կամ նախորդ տարիներին մատակարարված անվադողերին համարժեք կամ որակական հատկանիշներով ավելի բարձր անվադողեր, սակայն << պաշտպանության նախարարության կողմից կազմված անվադողերի տեխնիկական բնութագրերը օբյեկտիվորեն չհիմնավորված լինելու պատճառով, չհետապնդելով նպատակ, որ լինեն համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը և ստեղծելով արհեստական մոնոպոլ իրավիճակ՝ երբ մատակարարվող անվադողերի տեխնիկական բնութագիրը համապատասխանեցվում է միայն մեկ կազմակերպության անվադողերի տեխնիկական բնութագրին՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերության կողմից առաջարկվող անվադողերը որակվել են Ընթացակարգի տեխնիկական ցուցանիշներին չհամապատասխանող:

ООО Торговый Дом КАМА և «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի համագործակցությունը կրում է բազմապրոֆիլայն բնույթ, մասնավորապես՝ ցանկացած տեխնիկայի համար նախատեսված անվադողերի վերաբերյալ կատարվում են վերլուծություններ, փորձաքննություններ և «ԴԱՐՖ» ՍՊԸ-ին ներկայացվում է պաշտոնական կարծիք այդ տեխնիկայի համար անհրաժեշտ առավելագույն և նվազագույն տեխնիկական հատկանիշներով օժտված անվադողերի մասին, ինչպես նաև այդ ցուցանիշների հիման վրա արտադրվում են ООО Торговый Дом КАМА գործարանի անվադողերը: Այս տարվա Ընթացակարգի հրավերը ներկայացվել է ООО Торговый Дом КАМА գործարանին և վերջիններս Ընկերությանը վստահեցրել են, որ ООО Торговый Дом КАМА գործարանի անվադողերի տեխնիկական հատկանիշները հրավերով նշված տեխնիկայի համար միանշանակ բավարար են և նույնիսկ գերազանցում են, իսկ հրավերով նախատեսված տեխնիկական ցուցանիշները չհիմնավորված բարձր են: ООО Торговый Дом КАМА գործարանի անվադողերը հսկայական քանակներով մատակարարվում են ՌԴ բանակին և դրանց տեխնիկական հատկանիշների վերաբերյալ խնդիրների դեպքում դրանք

ուսումնասիրվում են և արտադրանքը մոդիֆիկացվում է: Վերոնշյալ գործընթացը կրում է շարունակական բնույթ՝ հաշվի առնելով ընկերության կողմից իրացվող արտադրանքի ծավալները և ընկերության դերը ռուսական անվադողերի շուկայում: «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի հայտը տեխնիկական հատկանիշների պատճառով մերժելու մասին տեղեկատվությունը փոխանցվել է ООО Торговый Дом КАМА ընկերությանը, ինչը մեծ զարմանք է առաջացրել ընկերության մոտ, քանի որ ООО Торговый Дом КАМА ընկերության արտադրանքի վարկանիշը անհիմն կասկածի տակ է դրվում:

Անվադողերի պարագայում արագության ինդեքսները և բեռնվածության ինդեքսները անվադողերի որակական հատկանիշների մասին վկայող ցուցանիշներ չեն հանդիսանում և կրում են զուտ պայմանական բնույթ: Նախորդ տարիների ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ООО Торговый Дом КАМА գործարանի արտադրության անվադողերի որակական հատկանիշների վերաբերյալ բացի դրական արձագանքից բացասական կարծիք կամ արձագանք չի ստացվել, իսկ թե արագության ինդեքսները, թե բեռնվածության ինդեքսները, թե անվադողերի շերտայնությունը, թե կառուցվածքի տեսակը՝ միանշանակ բավարար են և համապատասխան են եղել տվյալ տեխնիկայի պատշաճ շահագործման համար: Այս տարվա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընկերության կողմից առաջարկվել են նույն անվադողերը, որոնք «Մեծ Անիվ» խանութ սրահներում ամեն օր վաճառվում են սպառողներին և վայելում են մեծ պահանջարկ և համակրանք նրանց կողմից: Ինչ վերաբերվում է անվադողերի արագության ինդեքսներին և բեռնվածության ինդեքսներին, ապա «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի և ցանկացած մասնագիտացված ընկերության համար դա չի հանդիսանում էական ցուցանիշ, քանի որ դա միանշանակ կրում է զուտ պայմանական բնույթ և չի վկայում անվադողերի որակական հատկանիշների մասին, օրինակ՝ ձմեռային անվադողի համար նախատեսված է T (190) կմ/ժ կամ S (180) կմ/ժ արագության ինդեքս, սակայն ձմռանը ոչ ոք 180 կմ/ժ արագությամբ չի երթևեկում: Իսկ ինչ վերաբերվում է բեռնվածության ինդեքսին, անվադողերի շերտայնությանը, կառուցվածքի տեսակին «ԴԱՐՖ» ՍՊԸ-ի բազմամյա փորձը ցույց է տալիս, որ առաջարկվող անվադողերի տեխնիկական ցուցանիշները միանշանակ բավարար են տվյալ տեխնիկան պատշաճ շահագործելու համար: «Դարֆ» ՍՊԸ-ն՝ հասկանալով ՀՀ ՊՆ-ի դերը Հայաստանի Հանրապետության

համար և այդ կառույցի կողմից իրականացվող գործառույթների կարևորությունը, << պաշտպանության նախարարությանը չի առաջարկել չինական արտադրության անվադողեր, որոնք համաշխարհային շուկայում առկա են ցանկացած արագության, բեռնվածության և շերտայնության ինդեքսներով, սակայն տվյալ ինդեքսները չեն երաշխավորում որակական հատկանիշներ:

<< պաշտպանության նախարարությունը անվադողերի տեխնիկական հատկանիշները գնահատելու ժամանակ առաջնորդվել է անհասկանալի գնահատման մեխանիզմով, առաջացնելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ, ստեղծելով արհեստական մոնոպոլ իրավիճակ, իսկ կազմված տեխնիկական բնութագրերը օբյեկտիվորեն հիմնավորված չեն և համարժեք չեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Պատվիրատուի կողմից անտեսվել է այն փաստը, որ Հայաստանյան պայմանների համար պահանջվող տեխնիկական հատկանիշները կիրառելի չեն և հանդիսանում են անվադողի զուտ պայմանական հատկանիշներ և ընդհանրապես չեն վկայում որակի մասին, ինչպես նաև անտեսվել է այն փաստը, որ նախկինում փորձված և որակական հատկանիշներով հայտնի ООО Торговый Дом КАМА և աշխարհահռչակ գերմանական Continental անվադողեր արտադրող գործարանի դուստր ձեռնարկության Continental Tires RUS Ltd գործարանների արտադրանքը դրական կարծիքի է արժանացել թե << պաշտպանության նախարարության կողմից շահագործման ընթացքում, թե ամբողջ հայկական, ռուսական և միջազգային շուկաներում:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները և ներկայացված վերլուծությունը՝ Ընկերությունը գտնում է, որ «ԴԱՐՖ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.06.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 22.06.2017թ. գրությամբ Խորհրդին ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 08.06.2017թ. թիվ ԴՎԱ-1719 գրությամբ ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո «Դարֆ» ՍՊԸ-ն ծանուցվել է ներկայացնելու Կարգի 47-րդ հոդվածի 2-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, այդ թվում նաև՝ Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը: Սահմանված ժամկետում Ընկերության կողմից ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը, սակայն ապրանքի տեխնիկական բնութագրերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ տեխնիկական ցուցանիշները չեն համապատասխանում հրավերով պահանջվող տեխնիկական ցուցանիշներին:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, սակայն սահմանված ժամկետում Ընկերության կողմից ներկայացվել է նույն տեխնիկական բնութագիրը, որտեղ կրկին առկա են անհամապատասխանություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել է «Դարֆ» ՍՊԸ-ի հայտը՝ Ընթացակարգի թիվ 5, 11, 12, 15, 21, 23, 25, 27, 28, 30, 33, 34, 38, 40, 41, 42, 47, 58 և 61-րդ չափաբաժինների մասով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.06.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական

բնութագրերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով պահանջվող տեխնիկական ցուցանիշներին:

4. ՍՑ-ԱՄ-2017/18 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/18 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անվադողերի և կուտակիչ մարտկոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Դարֆ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետը սահմանում է հետևյալը.

3.1 Սույն հրավերի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուի էլեկտրոնային փոստին **a.baghramyan@mil.am** է ուղարկում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

3. Ընկերությունը հայտի 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ 1-5, 7-12, 15, 16, 18-23, 25-31, 33, 34, 36, 38, 40-43, 45, 47-49, 51-55, 57-61, 66-69, 71, 78 և 79-րդ չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընդ որում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «Դարֆ» ՍՊԸ-ն պարտավորվել է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

4. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ի՝ տեխնիկական բնութագրի (այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր), թիվ 5, 11, 12, 15, 21, 23, 25, 27, 28, 30, 33, 34, 38, 40-42, 47, 58 և 61-րդ չափաբաժիններով սահմանվել է հետևյալը.

N	Ապրանքի անվանումը	Անվադողի տեսակը ըստ չափի	Նշանակությունը	Անվադողի անվանումը պահանջելիս տի մոդելը	Անվադողի արտադրողը (Brand)	Անվադողի շերտավորման մակարդակը	Անվադողի արագության ինդեքսը (արագությունը կմ/ժ)	Անվադողի բեռնվածության ինդեքսը	Անվադողի սարքավորման կարգը
5	ավտոմեքենաների անիվներ (անվադող 265/70R15 համասեզոն, ՄԻՑՈՒԲԻՇԻ-ՊԱՋԵՐՈ մակնիշի ԱՏ-ների համար)	հատ	համասեզոն	Ցանկացած արտադրող			S(180)	112	1120
11	ավտոմեքենաների անիվներ (անվադող 195/16C կամ 205/75R16C համասեզոն, ԳԱԶել մակնիշի ԱՏ-ների համար)	լրակազմ մով	համասեզոն	Ցանկացած արտադրող	Ցանկացած արտադրող	10 PR	R(170)	113/111	1150/1090
12	ավտոմեքենաների անիվներ (անվադող 195/16C կամ 205/75R16C ձմեռային, ԳԱԶել մակնիշի ԱՏ-ների համար)	լրակազմ մով	ձմեռային	Ցանկացած արտադրող	Ցանկացած արտադրող	10 PR	R(170)	113/111	1150/1090
15	ավտոմեքենաների անիվներ (անվադող 215/65R16C ձմեռային, ՍՈԲՈԼ, ՖՈՐԴ-ՋԱՄԲՈ մակնիշների ԱՏ-ների համար)	լրակազմ մով	ձմեռային	Ցանկացած արտադրող	Ցանկացած արտադրող		T(190)	109/107	1030/975
21	ավտոմեքենաների անիվներ (անվադող 205/55R16 համասեզոն, ՀՅՈՒՆԴԱՒ-ԷԼԱՆՏՐԱ, ԿԻԱ-ՍԵՌԱՏՈ մակնիշների ԱՏ-ների համար)	հատ	համասեզոն	Ցանկացած արտադրող	Ցանկացած արտադրող		H(210)	94	670
23	ավտոմեքենաների անիվներ (անվադող 255/70R16 համասեզոն, ներքին կառուցվածքը- *կևվլարից (KEVLAR, DuPont TM)*, ՆԻՍԱՆ-ՆԱՎԱՐԱ մակնիշի ԱՏ-ների համար)	հատ	համասեզոն ներքին կառուցվածքը- *կևվլարից (KEVLAR, DuPont TM)*	Ցանկացած արտադրող	Ցանկացած արտադրող		T(190)	111	1090
25	ավտոմեքենաների անիվներ (անվադող 265/70 R16 համասեզոն, ներքին կառուցվածքը- *կևվլարից (KEVLAR, DuPont TM)*, ՋԻՊ ՆԻՍԱՆ, ՍԱՆ-ՅՈՆԳ մակնիշների ԱՏ-	հատ	համասեզոն ներքին կառուցվածքը- *կևվլարից (KEVLAR, DuPont TM)*	Ցանկացած արտադրող	Ցանկացած արտադրող		T(190)	112	1120

	ների համար)								
27	ավտոմեքենաների անիվներ (անվադող 225/65R17 համասեզոն, ՋԻՊ ՍՈՒԶՈՒԿԻ ԳՐԱՆԴ-ՎԻՏԱՐԱ, ՏՈՅՈՏԱ ՌԱՎ-4 մակնիշների ԱՏ-ների համար)	հատ	համասեզոն	Տանկացած արտադրող	Տանկացած արտադրող		H(210)	106	950
28	ավտոմեքենաների անիվներ (անվադող 225/65R17 ձմեռային, ՋԻՊ ՍՈՒԶՈՒԿԻ ԳՐԱՆԴ-ՎԻՏԱՐԱ, ՏՈՅՈՏԱ ՌԱՎ-4 մակնիշների ԱՏ-ների համար)	հատ	ձմեռային	Տանկացած արտադրող	Տանկացած արտադրող		T(190)	106	950
30	ավտոմեքենաների անիվներ (անվադող 265/65R17 համասեզոն, ներքին կառուցվածքը- *կևլարից (KEVLAR, DuPont TM)*, ՋԻՊ ՊՐԱԴՈ, ԼԱՆԴ-ԿՈՌՈՒԶԵՌ մակնիշների ԱՏ-ների համար)	հատ	համասեզոն ներքին կառուցվածքը- *կևլարից (KEVLAR, DuPont TM)*	Տանկացած արտադրող	Տանկացած արտադրող		T(190)	112	1120
33	ավտոմեքենաների անիվներ (անվադող 265/60R18 համասեզոն, ներքին կառուցվածքը- *կևլարից (KEVLAR, DuPont TM)*, ՋԻՊ ԼԱՆԴ ԿՈՌՈՒԶԵՌ ՊՐԱԴՈ, ՄԻՑՈՒԲԻՇԻ ՊԱՋԵՌՈ մակնիշների ԱՏ-ների համար)	հատ	համասեզոն ներքին կառուցվածքը- *կևլարից (KEVLAR, DuPont TM)*	Տանկացած արտադրող	Տանկացած արտադրող		T(190)	110	1060
34	ավտոմեքենաների անիվներ (անվադող 265/60R18 ձմեռային, ՋԻՊ ԼԱՆԴ ԿՈՌՈՒԶԵՌ ՊՐԱԴՈ, ՄԻՑՈՒԲԻՇԻ ՊԱՋԵՌՈ մակնիշների ԱՏ-ների համար)	հատ	ձմեռային	Blizzak DM-V2", "Latitude X-Ice Xi2", "UltraGrip Ice SUV", "Conti4x4WinterContact", "Scorpion Winter" կամ համարժեք	Bridgestone, Michelin, Goodyear, Continental, Pirelli կամ համարժեք		T(190)	114	1180
38	ավտոմեքենաների անիվներ (անվադող 275/60R20 համասեզոն, ՋԻՊ ՆԻՍՍԱՆ-ՊԱՏՐՈԼ մակնիշի ԱՏ-ների համար)	հատ	համասեզոն	Ducler A/T REVO 2", "Premier LTX", "Wrangler SilentArmor", "CrossContac LX20", "Scorpion Verde All Season Plus" կամ համարժեք	Bridgestone, Michelin, Goodyear, Continental, Pirelli կամ համարժեք		T(190)	114	1180
40	ավտոմեքենաների անիվներ (անվադող 225/75R16 համասեզոն, ներքին կառուցվածքը- SilentArmor Technology, Կիա Սորենտո մակնիշի ԱՏ-ների համար)	հատ	համասեզոն ներքին կառուցվածքը- *SilentArmor Technology*	Տանկացած արտադրող	Տանկացած արտադրող		T(190)	104	900
41	ավտոմեքենաների անիվներ (անվադող 225/75R16 ձմեռային, Կիա Սորենտո մակնիշի ԱՏ-ների համար)	հատ	ձմեռային	Տանկացած արտադրող	Տանկացած արտադրող		Q(160)	115/112	1215/1120
42	ավտոմեքենաների անիվներ (անվադող 235/65R17 համասեզոն,	հատ	համասեզոն	Ducler H/P Sport AS", "Defender	Bridgestone, Michelin, Goodyear,		V(240)	104	900

	ԿԻԱ, ՄԵՌ մակնիշների ԱՏ-ների համար)			LTX", "Wrangler HP All-Weather", "CrossContact LXSport", "Scorpion Verde All Season Plus" կամ համարժեք	Continental, Pirelli կամ համարժեք				
47	բեռնատարների անիվներ (անվադող 12.00-18, Մոդելը՝ К-70, ԳԱԶ-66, 3308 մակնիշի ԱՏ-ների համար)	լրակազմով	պահեստային շերտի գծանկարը՝ բարձր անցողունակ, զոլի կատարված քր գիսագծով	К-70 կամ համարժեք	ОАО "Омскшина" կամ համարժեք	PR 8	J(100)	129	1850
58	բեռնատարների անիվներ (անվադող 10.00R20 (280-508), Մոդելը՝ ՕՖ-73Ю, ԿԱՄԱԶ, ՄԱԶ ԱՏ-ների համար)	լրակազմով	պահեստային շերտի գծանկարը՝ ունիվերսալ, զոլի կատարված քր ասֆալտ	"И-281,У-4" կամ համարժեք	ОАО "Омскшина" կամ համարժեք	PR 18	J(100)	149/146	3250/3 000
61	բեռնատարների անիվներ (անվադող 1300x530-533, Մոդելը՝ ВИ-3, ԿԱՄԱԶ մակնիշի ԱՏ-ների համար)	լրակազմով	պահեստային շերտի գծանկարը՝ բարձր անցողունակ, զոլի կատարված քր գիսագծով	ВИ-3 կամ համարժեք	ОАО "Нижнекамскшина", ОАО "Омскшина" կամ համարժեք	PR 16	B(50)	173	6500

5. «Դարֆ» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի Հավելված N 5-ով Տեխնիկական բնութագրի թիվ 5, 11, 12, 15, 21, 23, 25, 27, 28, 30, 33, 34, 38, 40-42, 47, 58 և 61-րդ չափաբաժինների համար առաջարկել է հետևյալը՝

N	Ապրանքի անվանումը	Անվադողի լրակազմումը	Նշանակությունը	Անվադողի անվանումը պահեստային շերտի մոդելը	Անվադողի արտադրողը (Brand)	Վերանորոգման հնարավորությունը	ոստայնի դեմ և սառեցման դիմադրության վերաբերյալ	ոստայնի դեմ և սառեցման դիմադրության վերաբերյալ	ոստայնի դեմ և թեք գլորակալման դիմադրության վերաբերյալ
5	Անվադող -265/70R15	-	ամառային	MATADOR	MATADOR		H(210)	112	1120
11	Անվադող – 205/75R 16C	-	համասեզոնային	MATADOR	MATADOR	8 PR	R(170)	110/108	1060/1000
12	Անվադող-205/75R16C	-	ձմեռային	VIATTI/ V-525	VIATTI/ V-525	8 PR	R(170)	110/108	1060/1000
15	Անվադող-215/65R16C	-	ձմեռային	VIATTI/ V-525	VIATTI/ V-525		R(170)	109/107	1030/975

21	Անվադող-205/55R16	-	համասեզոն ային	MATADOR MP61 Adhessa Evo	MATADOR MP61 Adhessa Evo		H(210)	91	615
23	Անվադող-255/70R16	-	համասեզոն ային	MATADOR	MATADOR		T(190)	111	1090
25	Անվադող -265/70R16	-	համասեզոն ային	MATADOR	MATADOR		T(190)	112	1120
27	Անվադող -225/65R17	-	համասեզոն ային	VIATTI/ V-237	VIATTI/ V-237		H(210)	102	850
28	Անվադող -225/65R17	-	ձմեռային	VIATTI/ V-526	VIATTI/ V-526		T(190)	102	850
30	Անվադող -225/65R17	-	համասեզոն ային	VIATTI	VIATTI		H(210)	112	1120
33	Անվադող -265/60R18	-	համասեզոն ային	VIATTI	VIATTI		H(210)	110	1060
34	Անվադող -265/60R18	-	ձմեռային	VIATTI	VIATTI		T(190)	110	1060
38	Անվադող -275/60R20	-	համասեզոն ային	GENERAL	GENERAL		S(180)	119	1360
40	Անվադող -225/75R16	-	համասեզոն ային	MATADOR	MATADOR		H(210)	108	1000
41	Անվադող -225/75R16	-	ձմեռային	MATADOR	MATADOR		T(190)	104	900
42	Անվադող -235/65R17	-	համասեզոն ային	VIATTI/ V-237	VIATTI/ V-237		H(210)	104	900
47	Անվադող-12,00-18	-	Ռադիալային, բարձր. անցող.	KAMA	KAMA	-	J(100)	135	2180
58	Անվադող -10.00R20	-	ունիվերսալ	KAMA	KAMA	PR 16	K(110)	146/143	3000/2725
61	Անվադող 1300x530-533,	-	դիագոնալ բարձր. անցող.	KAMA	KAMA	PR 12	F(80)	156	4000

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.03.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով «Դարֆ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի թիվ 5, 11, 16, 18, 19, 20, 23, 25, 26, 30, 31, 33, 34, 38, 40, 41, 47, 58 և 61-րդ չափաբաժինների մասով, և սահմանված կարգով առաջարկվել է Ընկերությանը ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ «Դարֆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, և հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման

նիստը՝ Ընկերությանը տալով արձանագրված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված շտկումները, 10.05.2017թ. Ընկերության հայտը թիվ 5, 11, 23, 25, 30, 33, 34, 38, 40, 41, 47, 58 և 61-րդ չափաբաժինների մասով մերժել է՝ տեխնիկական բնութագրերում առկա անհամապատասխանությունների պատճառով:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.05.2017թ. շարունակելով աշխատանքները արձանագրել է, որ Ընթացակարգի թիվ 3, 12, 15, 21, 27, 28, 29, 42 և 43-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Դարֆ» ՍՊԸ-ն և վերջինիս առաջարկվել է ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ «Դարֆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում՝ թիվ 12, 15, 21, 27, 28 և 42-րդ չափաբաժինների մասով, առկա են անհամապատասխանություններ և Կարգի 51-րդ կետի համաձայն՝ Ընկերությանը տրվել է մեկ աշխատանքային օր արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված շտկումները, 29.05.2017թ. Ընկերության հայտը թիվ 12, 15, 21, 27, 28 և 42-րդ չափաբաժինների մասով մերժել է՝ տեխնիկական բնութագրերում առկա անհամապատասխանությունների պատճառով:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2017թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Դարֆ» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող մասնակից Ընթացակարգի թիվ 3, 16, 18, 19, 20, 26, 29, 31 և 43-րդ չափաբաժինների մասով և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.06.2017թ. թիվ 03/73-1/10692-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.06.2017թ. թիվ ԴՎԱ/1719 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ ***գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը***

զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում ***հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետը սահմանում է հետևյալը.

3.1 Սույն հրավերի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուի էլեկտրոնային փոստին **a.baghramyan@mil.am** է ուղարկում սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է ***առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:***

Ընկերությունը հայտի 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ 1-5, 7-12, 15, 16, 18-23, 25-31, 33, 34, 36, 38, 40-43, 45, 47-49, 51-55, 57-61, 66-69, 71, 78 և 79-րդ չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/7»

ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընդ որում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «Դարֆ» ՍՊԸ-ն պարտավորվել է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ի՝ տեխնիկական բնութագրի (այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր), թիվ 5, 11, 12, 15, 21, 23, 25, 27, 28, 30, 33, 34, 38, 40-42, 47, 58 և 61-րդ չափաբաժիններով սահմանվել է հետևյալը.

N	Ապրանքի անվանումը	Անվտանգության համապատասխանության	Նշանակությունը	Անվադողի անվանումը պահպանաչիպի տի մոդելը	Անվադողի արտադրողը (Brand)	Անվադողի ստվարության վերնիկների քանակը	Անվադողի առավելագույն թույլատրելի բեռնվածության ինդեքսը	Անվադողի թույլատրելի առավելագույն արագության ինդեքսը	Անվադողի բեռնվածության ինդեքսը
5	ավտոմեքենաների անիվներ (անվադող 265/70R15 համասեզոն, ՄԻՇՈՒԻՇԻ-ՊԱՋԵՐՈ մակնիշի ԱՏ-ների համար)	հատ	համասեզոն	Ցանկացած արտադրող			S(180)	112	1120
11	ավտոմեքենաների անիվներ (անվադող 195/16C կամ 205/75R16C համասեզոն, ԳԱԶել մակնիշի ԱՏ-ների համար)	լրակազմ	համասեզոն	Ցանկացած արտադրող	Ցանկացած արտադրող	10 PR	R(170)	113/111	1150/1090
12	ավտոմեքենաների անիվներ (անվադող 195/16C կամ 205/75R16C ձմեռային, ԳԱԶել մակնիշի ԱՏ-ների համար)	լրակազմ	ձմեռային	Ցանկացած արտադրող	Ցանկացած արտադրող	10 PR	R(170)	113/111	1150/1090
15	ավտոմեքենաների անիվներ (անվադող 215/65R16C ձմեռային, ՍՈԲՈԼ, ՖՈՐԴ-ՋԱՄԲՈ մակնիշների ԱՏ-ների համար)	լրակազմ	ձմեռային	Ցանկացած արտադրող	Ցանկացած արտադրող		T(190)	109/107	1030/975
21	ավտոմեքենաների անիվներ (անվադող 205/55R16 համասեզոն, ՀՅՈՒՆԴԱՒ-ԷԼԱՆՏՐԱ, ԿԻԱ-ՍԵՌԱՏՈ մակնիշների ԱՏ-ների համար)	հատ	համասեզոն	Ցանկացած արտադրող	Ցանկացած արտադրող		H(210)	94	670
23	ավտոմեքենաների անիվներ (անվադող 255/70R16 համասեզոն, ներքին կառուցվածքը- *կևլարից (KEVLAR, DuPont TM)*, ՆԻՍԱՆ-ՆԱՎԱՐԱ մակնիշի ԱՏ-ների համար)	հատ	համասեզոն ներքին կառուցվածքը- *կևլարից (KEVLAR, DuPont TM)*	Ցանկացած արտադրող	Ցանկացած արտադրող		T(190)	111	1090
25	ավտոմեքենաների անիվներ (անվադող 265/70	հատ	համասեզոն ներքին	Ցանկացած	Ցանկացած		T(190)	112	1120

	R16 համասեղոն, ներքին կառուցվածքը- *կևլարից (KEVLAR, DuPont TM)*, ՋԻՊ ՆԻՍԱՆ, ՍԱՆ-ՅՈՆԳ մակնիշների ԱՏ-ների համար)		կառուցվածքը- *կևլարից (KEVLAR, DuPont TM)*	արտադրող	արտադրող				
27	ավտոմեքենաների անիվներ (անվադող 225/65R17 համասեղոն, ՋԻՊ ՍՈՒԶՈՒԿԻ ԳՐԱՆ-ՎԻՏԱՐԱ, ՏՈՅՈՏԱ ՌԱՎ-4 մակնիշների ԱՏ-ների համար)	հատ	համասեղոն	Ճանկացած արտադրող	Ճանկացած արտադրող		H(210)	106	950
28	ավտոմեքենաների անիվներ (անվադող 225/65R17 ձմեռային, ՋԻՊ ՍՈՒԶՈՒԿԻ ԳՐԱՆ-ՎԻՏԱՐԱ, ՏՈՅՈՏԱ ՌԱՎ-4 մակնիշների ԱՏ-ների համար)	հատ	ձմեռային	Ճանկացած արտադրող	Ճանկացած արտադրող		T(190)	106	950
30	ավտոմեքենաների անիվներ (անվադող 265/65R17 համասեղոն, ներքին կառուցվածքը- *կևլարից (KEVLAR, DuPont TM)*, ՋԻՊ ՊՐԱԴՈ, ԼԱՆԴ-ԿՈՌՈՒԶԵՌ մակնիշների ԱՏ-ների համար)	հատ	համասեղոն ներքին կառուցվածքը- *կևլարից (KEVLAR, DuPont TM)*	Ճանկացած արտադրող	Ճանկացած արտադրող		T(190)	112	1120
33	ավտոմեքենաների անիվներ (անվադող 265/60R18 համասեղոն, ներքին կառուցվածքը- *կևլարից (KEVLAR, DuPont TM)*, ՋԻՊ ԼԱՆԴ ԿՈՌՈՒԶԵՌ ՊՐԱԴՈ, ՄԻՑՈՒԲԻՇԻ ՊԱՋԵՌՈ մակնիշների ԱՏ-ների համար)	հատ	համասեղոն ներքին կառուցվածքը- *կևլարից (KEVLAR, DuPont TM)*	Ճանկացած արտադրող	Ճանկացած արտադրող		T(190)	110	1060
34	ավտոմեքենաների անիվներ (անվադող 265/60R18 ձմեռային, ՋԻՊ ԼԱՆԴ ԿՈՌՈՒԶԵՌ ՊՐԱԴՈ, ՄԻՑՈՒԲԻՇԻ ՊԱՋԵՌՈ մակնիշների ԱՏ-ների համար)	հատ	ձմեռային	Blizzak DM-V2", "Latitude X-Ice Xi2", "UltraGrip Ice SUV", "Conti4x4WintcrContact", "Scorpion Winter" կամ համարժեք	Bridgestone, Michelin, Goodyear, Continental, Pirelli կամ համարժեք		T(190)	114	1180
38	ավտոմեքենաների անիվներ (անվադող 275/60R20 համասեղոն, ՋԻՊ ՆԻՍՍԱՆ-ՊԱՏՐՈԼ մակնիշի ԱՏ-ների համար)	հատ	համասեղոն	Ducler A/T REVO 2", "Premier LTX", "Wrangler SilentArmor", "CrossContac LX20", "Scorpion Verde All Season Plus" կամ համարժեք	Bridgestone, Michelin, Goodyear, Continental, Pirelli կամ համարժեք		T(190)	114	1180
40	ավտոմեքենաների անիվներ (անվադող 225/75R16 համասեղոն, ներքին կառուցվածքը- SilentArmor Technology, Կիա Սորենտո մակնիշի ԱՏ-ների համար)	հատ	համասեղոն ներքին կառուցվածքը- *SilentArmor Technology*	Ճանկացած արտադրող	Ճանկացած արտադրող		T(190)	104	900
41	ավտոմեքենաների անիվներ (անվադող 225/75R16 ձմեռային, Կիա	հատ	ձմեռային	Ճանկացած արտադրող	Ճանկացած արտադրող		Q(160)	115/112	1215/1120

	Սորենտո մակնիշի ԱՏ-ների համար)								
42	ավտոմոբիլների անիվներ (անվադող 235/65R17 համառեզոն, ԿԻԱ, ՄԵՌ մակնիշների ԱՏ-ների համար)	հատ	համառեզոն	Dueler H/P Sport AS", "Defender LTX", "Wrangler HP All-Weather", "CrossContact LXSport", "Scorpion Verde All Season Plus" կամ համարժեք	Bridgestone, Michelin, Goodyear, Continental, Pirelli կամ համարժեք		V(240)	104	900
47	բեռնատարների անիվներ (անվադող 12,00-18, Մոդելը՝ К-70, ԳԱԶ-66, 3308 մակնիշի ԱՏ-ների համար)	լրակազմով	պահեստային շերտի գծանկարը- բարձր անցողունակ, զոլի կատարված քր դիագրամայ	К-70 կամ համարժեք	ОАО "Омскшина" կամ համարժեք	PR 8	J(100)	129	1850
58	բեռնատարների անիվներ (անվադող 10.00R20 (280-508), Մոդելը՝ ՕԻ-73Բ, ԿԱՄԱԶ, ՄԱԶ ԱՏ-ների համար)	լրակազմով	պահեստային շերտի գծանկարը- ունիվերսալ, զոլի կատարված քր դիագրամայ	"И-281,У-4" կամ համարժեք	ОАО "Омскшина" կամ համարժեք	PR 18	J(100)	149/146	3250/3000
61	բեռնատարների անիվներ (անվադող 1300x530-533, Մոդելը՝ ВИ-3, ԿՈՒԱԶ մակնիշի ԱՏ-ների համար)	լրակազմով	պահեստային շերտի գծանկարը- բարձր անցողունակ, զոլի կատարված քր դիագրամայ	ВИ-3 կամ համարժեք	ОАО "Нижнекамскшина", ОАО "Омскшина" կամ համարժեք	PR 16	B(50)	173	6500

«Դարֆ» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի Հավելված N 5-ով Տեխնիկական բնութագրի թիվ 5, 11, 12, 15, 21, 23, 25, 27, 28, 30, 33, 34, 38, 40-42, 47, 58 և 61-րդ չափաբաժինների համար առաջարկել է հետևյալը՝

N	Ապրանքի անվանումը	Ապրանքանիշը (եթե առկա է)	Դասակարգումը	Անվադողի անվանումը պահեստային շերտի մոդելը	Անվադողի արտադրողը (Brand)	Ցցամեջքային (եթե առկա է)	ռադիուսը դյույմերով (մարդատար մեքենաների համար)	ռադիուսը դյույմերով (մարդատար մեքենաների համար)	ռադիուսը դյույմերով (մարդատար մեքենաների համար)
5	Անվադող -265/70R15	-	ամառային	MATADOR	MATADOR		H(210)	112	1120
11	Անվադող – 205/75R 16C	-	համառեզոն ային	MATADOR	MATADOR	8 PR	R(170)	110/108	1060/1000
12	Անվադող-205/75R16C	-	ձմեռային	VIATTI/ V-525	VIATTI/ V-525	8 PR	R(170)	110/108	1060/1000

15	Անվադող-215/65R16C	-	ձմեռային	VIATTI/ V-525	VIATTI/ V-525		R(170)	109/107	1030/975
21	Անվադող-205/55R16	-	համասեզոն ային	MATADOR MP61 Adhessa Evo	MATADOR MP61 Adhessa Evo		H(210)	91	615
23	Անվադող-255/70R16	-	համասեզոն ային	MATADOR	MATADOR		T(190)	111	1090
25	Անվադող -265/70R16	-	համասեզոն ային	MATADOR	MATADOR		T(190)	112	1120
27	Անվադող -225/65R17	-	համասեզոն ային	VIATTI/ V-237	VIATTI/ V-237		H(210)	102	850
28	Անվադող -225/65R17	-	ձմեռային	VIATTI/ V-526	VIATTI/ V-526		T(190)	102	850
30	Անվադող -225/65R17	-	համասեզոն ային	VIATTI	VIATTI		H(210)	112	1120
33	Անվադող -265/60R18	-	համասեզոն ային	VIATTI	VIATTI		H(210)	110	1060
34	Անվադող -265/60R18	-	ձմեռային	VIATTI	VIATTI		T(190)	110	1060
38	Անվադող -275/60R20	-	համասեզոն ային	GENERAL	GENERAL		S(180)	119	1360
40	Անվադող -225/75R16	-	համասեզոն ային	MATADOR	MATADOR		H(210)	108	1000
41	Անվադող -225/75R16	-	ձմեռային	MATADOR	MATADOR		T(190)	104	900
42	Անվադող -235/65R17	-	համասեզոն ային	VIATTI/ V-237	VIATTI/ V-237		H(210)	104	900
47	Անվադող-12,00-18	-	Ռադիալային և բարձր. անցող.	KAMA	KAMA	-	J(100)	135	2180
58	Անվադող -10.00R20	-	ունիվերսալ	KAMA	KAMA	PR 16	K(110)	146/143	3000/2725
61	Անվադող 1300x530-533,	-	դիագոնալ բարձր. անցող.	KAMA	KAMA	PR 12	F(80)	156	4000

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.03.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով «Դարֆ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի թիվ 5, 11, 16, 18, 19, 20, 23, 25, 26, 30, 31, 33, 34, 38, 40, 41, 47, 58 և 61-րդ չափաբաժինների մասով, և սահմանված կարգով առաջարկվել է Ընկերությանը ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ «Դարֆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, և հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը՝ Ընկերությանը տալով արձանագրված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված շտկումները, 10.05.2017թ. Ընկերության հայտը թիվ 5, 11, 23, 25, 30, 33, 34, 38, 40, 41, 47, 58 և 61-րդ չափաբաժինների մասով մերժել է՝ տեխնիկական բնութագրերում առկա անհամապատասխանությունների պատճառով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.05.2017թ. շարունակելով աշխատանքները արձանագրել է, որ Ընթացակարգի թիվ 3, 12, 15, 21, 27, 28, 29, 42 և 43-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Դարֆ» ՍՊԸ-ն և վերջինիս առաջարկվել է ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ «Դարֆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում՝ թիվ 12, 15, 21, 27, 28 և 42-րդ չափաբաժինների մասով, առկա են անհամապատասխանություններ և Կարգի 51-րդ կետի համաձայն՝ Ընկերությանը տրվել է մեկ աշխատանքային օր արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված շտկումները, 29.05.2017թ. Ընկերության հայտը թիվ 12, 15, 21, 27, 28 և 42-րդ չափաբաժինների մասով մերժել է՝ տեխնիկական բնութագրերում առկա անհամապատասխանությունների պատճառով:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով «Դարֆ» ՍՊԸ-ի հայտը, գործել է իրավաչափ, քանի որ «Դարֆ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերի թիվ 5, 11, 12, 15, 21, 23, 25, 27, 28, 30, 33, 34, 38, 40-42, 47, 58 և 61-րդ չափաբաժինների համար առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերի թիվ 5, 11, 12, 15, 21, 23, 25, 27, 28, 30, 33, 34, 38, 40-42, 47, 58 և 61-րդ չափաբաժիններով պահանջվող ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից հայտի թիվ 4.1 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Դարֆ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ «Դարֆ» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը***, քանի որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ առկա չէ որևէ տեղեկատվություն «Դարֆ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 29.03.2017թ., հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ:

«Դարֆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02609379) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 13.06.2017թ. թիվ 03/73-1/10692-17 գրությամբ «Դարֆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02609379) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ